ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ)		ՁԵՒԱՎՈՐՄԱՆ, ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ստեղծման մասին

Ֆրանսիա, Փարիզ, 30.11.2012 թ.

Հոդված 1

Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւնը միասին իրենց վրա են վերցնում Արեւմտեան Հայաստանի պետական համակարգերի ստեղծման պատասխանատվությունը, որի համար կազմավորում են հատուկ հանձնախումբ, որն իրականացնելու է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի ձեվավորումը:

Հոդված 2

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) նաեւ իրականացնելու է հայ ժողովրդի ուժերի համախմբումը:

Հայկական Հարցի՝ այսինքն հայոց պահանջատիրության լուծման գործում հիմքային է համարում ազգային միասնությունը եւ հայոց անժամանցելի իրավունքը:

Միեւնույն ժամանակ ընդունում միայն մեկ բանաձեւ՝ հայ ժողովրդը պետք է ապրի ինքնաբավ եվ ապագայում մեկ միասնական եւ անկախ Հայոց պետության կազմում:

Հոդված 3

Հենվելով Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհուրդի պաշտոնական հայտարարության վրա, ընդունված՝ 2004 թվականի դեկտեմբերի 17-ին, Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասին Հռչակագրի, ընդունված՝ 2007 թվականի հունվարի 20-ին:

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության ստեղծման որոշման, ընդունված՝ 2011 թվականի փետրվարի 4-ին, եւ պետական համակարգի մասին որոշման, ընդունված՝ 2011 թվականի մարտի 2-ին:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի 4-րդ Վեհաժողովի որոշման համաձայն՝ Փարիզ, 2011 թվականի նոյեմբեր 26-ի, աշխատանքներ սկսել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու համար:

Հոդված 4

Առաջնորդվելով վերո նշված փաստաթղթերով Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը հայտարարում են Արեւմտեան

Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ստեղծման որոշում կայացնելու մասին: Սույն որոշումը հիմք կհանդիսանա Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հռչակագրի համար:

Հոդված 5

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից սկսված:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ՝
Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Վարչապետ՝
Տիգրան Փաշաբեզեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

Արևմտեան Հայաստանի Հազգային Խորհուրդի Ներկայացուցչութիւն Ֆրանսա

Représentation en France du Conseil National d'Arménie Occidentale

BP 61

92224 BAGNEUX CEDEX - FRANCE

stat.gov.wa@haybachdban.org